

# Տ Ա Ր Ա Գ Ի Ր Ս Ո Ւ Ա Կ

**ԱՐԱՐԻՈՅ** ժայռերում՝

Այսօր տեսի՛ տրտմագին

Օտար Սոխակ երգում էր

“ Վարդ , բուրաստան ” վշտագին :

“ Վաթան , վաթան ” մնչելով՝

Այն էր քաշում գառնագին ,

Աղիողրամ հեծելով

Հոգւոց հանում լսլագին :

**Յաւ** Սոխակին ~~Գրեմ~~ վեր

Սիրտըս խոցեց զլսովին ,

Հեծեծանքն վշտագին

Կրակ թափեց իմ գըլխին :

**Կարեկցաբար** մերձեցայ

Եւ հարցրի Սոխակին .

— Է՞ր հեռացար վաթանից ,

Ի՞նչու հեծես գառնագին — :

— **Բուք** կատաղե Հիւսիսին

Բռնի մղեց յայս ժայռուտ ,

Իմ հայրենի սուրբ հողից

Տարագրեց յայս քարուտ :

**Ուր** ոչ գետ կայ ոչ աղբիւր ,

Այլ արաւած , աւաղուտ .

Ո՛չ բուրաստան , ոչ այգի ,

Այլ չոր սարեր քարքարուտ :

**Անզուգական** ընդ երկինք

Եւ ցանկալին ողջ աղանց ,

Հայաստանն է իմ վաթան ,

Հայկայ երկիրն գիւցաղանց :

**Աստուածատուն**ի Եղեմն է

Իմ բուրաստան գերազանց ,

Որ ուռգի քաջառաջ

Ջրովք գետոց հայկաղանց :

**Արծաթափայլ** բիւր աղբիւրք ,

Հաղարաւոր ջինջ առուակ

Ողողում են իմ վաթան

Աշուն , գարուն շարունակ :

- Աղինաբոյս բիւր ծաղիունք  
Ինչպէս արփի փայլունակ ,  
Անմահական հոտք բուրեն  
Վարդ , բալասան , մանիւշակ — :
- Լսեց Սոխակն եւ թռաւ  
Խոր խոր ձորեր չափելով ,  
Սիրուն սար մի բարձրացաւ ,  
Զիթենեաց մէջ թառելով :
- Աչերն անդէն վեր յառած  
Ի խոր սրտէ հառաչեաց ,  
Վեր սլացաւ զօրացած  
Վաղեց վաթան իւր նախնեաց :
- Արդեւք զգանց ինչճ Սոխակն  
Թէ այս սարն ինչ սար էր ,  
Ինչ զօրութիւն գերբնական ,  
Որ զօրացոյց իւր թեւեր :
- Այս էր սարն զիթենեաց  
Ուր կ'աղօթէր միշտ Յիսուս ,  
Բազկատարած , մտովին  
Ամեն գիշեր մինչ 'ի լոյս :
- Յերկնից յերկիր 'ի խոնարհ  
Այն Մեսիան , երբ իջաւ ,  
Պաղէստինի ժայռերում  
Իբրեւ պանդուխտ շրջեցաւ :
- Որ համբարձաւն այս սարից  
Իւր օթարան երկնային ,  
Նա զօրացոյց թոյլ թեւեր  
Թշուառ պանդուխտ Սոխակին :

ՄԱՐԴՈՒԼ

